ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ
«ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ՝ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԸՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1993 թվականին վավերացնելով «Երեխայի իրավունքների մասի» ՄԱԿ-ի կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա)՝ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է պարտավորություն համապատասխանեցնելու իր ներպետական օրենքները և պրակտիկան Կոնվենցիայի պահանջներին: 2005 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Կոնվեցիայի երկու կից արձանագրությունները՝ «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին», ինչպես նաև «Զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերյալ» կամընտիր արձանագրությունները:

Հարկ է նշել, որ Կոնվենցիայի հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամընտիր արձանագրությամբ իրեն վերապահված բոլոր գործառույթները կատարելիս ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտեն) առաջնորդվում է երեխայի լավագույն շահի սկզբունքով՝ հաշվի առնելով երեխայի կարծիքը իր տարիքին և հասունությանը համապատասխան:[1]

Երեխաների իրավունքների ապահովման համար պետք է լինեն երեխաների իրավունքների խախտման դեպքերը վերացնելու արդյունավետ միջոցներ: Երեխաները հատուկ խոցելի խումբ են և պետությունը պետք է հատուկ ուշադրություն դարձնի երեխաների և նրանց ներկայացուցիչների համար մատչելի և երեխաների նկատմամբ զգայուն իրավունքների պաշտպանության ընթացակարգերի ապահովմանը:[2]

---

[1] Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի՝ հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամընտիր արձանագրության ընթացակարգային կանոններ, 14-րդ հոդված, 2-րդ մաս, հասանելի է https://undocs.org/CRC/C/62/3 հղումով, 2020 թվականի հունիսի 9-ի դրությամբ:

[2] Տե՛ս Երեխաների իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտե, «Երեխայի իրավունքների մասին» Կոնվենցիայով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ ընդհանուր մեկնաբանություններ, հասանելի է https://www.refworld.org/docid/4538834f11.html հղումով, 2020 թվականի հունիսի 9-ի դրությամբ:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի՝ հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամընտիր արձանագրության դրույթների համաձայն՝ Կոմիտեին են ներկայացվում բողոքներ Կոնվենցիայով և կից վերոնշյալ արձանագրություններով երաշխավորված իրավունքների կապակցությամբ:[3]

Կոմիտեին ներկայացվող բողոքների ընթացակարգը հիմնված է մի շարք ընդհանուր սկզբունքների վրա, որոնք ամրագրված են հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամընտիր արձանագրությունում:

Կոմիտեն պահանջում է պատշաճ կերպով հաշվի առնել երեխայի իրավունքներն ու տեսակետները՝ հիմնվելով երեխայի լավագույն շահերի ապահովման սկզբունքի վրա: Դրանով իսկ պայմանավորված հաղորդագրություններ ներկայացնելու կարգը նախատեսելիս կամընտիր արձանագրությունը նախատեսում է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայով սահմանված հիմնարար չափորոշիչները, ինչպիսիք են երեխայի լավագույն շահերի հաշվի առնելը և երեխայի՝ սեփական կարծիքը արտահայտնելու իրավունքը:[4] Այս սկզբունքներն արտացոլվում են հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամընտիր արձանագրության տարբեր դրույթներում, ինչպիսին է այն դրույթը, որ բողոքների քննման ընթացակարգը իրականացվում է երեխայի նկատմամբ զգայուն ձևով՝ երեխայի տարիքին և հասունությանը համապատասխան:[5]

Հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամընտիր արձանագրության մեկ այլ առաջնորդող սկզբունք է բողոք ներկայացրած անձի

---

[3] Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի՝ հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամընտիր արձանագրություն, հասանելի է https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/opiccrc.aspx հղումով, 2020 թվականի հունիսի 9-ի դրությամբ:

[4] «*Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին*», «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 3-րդ // «*Իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն*», «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 3-րդ

[5] Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի՝ հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամընտիր արձանագրություն, 3-րդ հոդված, 1-ին մաս:

պաշտպանությունը: Կոմիտեն կարող է հրաժարվել բողոքը քննելուց, եթե կարծում է, որ դա երեխայի շահերից չի բխում:[6]

Հաղորդակցությունները պետք է ներկայացվեն երեխայի համար մատչելի ձևաչափով, նույնիսկ այն դեպքերում, երբ վարույթի ընթացքում երեխայի շահերը ներկայացնում է մեծահասակը: [7]

Կարևոր է արձանագրել, որ Կոմիտեն ՀՀ-ի վերաբերյալ դեռևս 2013 թվականի իր ամփոփիչ դիտարկումներում նշել է, որ Հայաստանը երեխաների իրավունքների պաշտպանության իրագործումն առավել ամրապնդելու համար պետք է վավերացնի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի՝ հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամընտիր արձանագրությունը:[8]

Այսպիսով, «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի՝ հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամընտիր արձանագրության վավերացումը հնարավորություն կտա առավել արդյունավետ պաշտպանել երեխաների՝ Կոնվենցիայով և կից արձանագրություններով երաշխավորված իրավունքները:

---

[6] Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի՝ հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամընտիր արձանագրություն, 3-րդ հոդված, 2-րդ մաս:

[7] Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի՝ հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամընտիր արձանագրության ընթացակարգային կանոններ, 14-րդ հոդված, 2-րդ մաս, հասանելի է https://undocs.org/CRC/C/62/3 հղումով:

[8] Տե՛ս Երեխաների իրավունքների հարցերով ՄԱԿ-ն կոմիտե, Հայաստանի Հանրապետության երրորդ և չորրորդ պարբերական զեկույցների առնչությամբ ամփոփիչ դիտարկումներ, հասանելի է https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC/C/ARM/CO/3-4&Lang=En հղումով, 2020 թվականի հունիսի 9-ի դրությամբ: